ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«13» 08 2025թ.

№ Վլեոռ2/1230

«ԿԱՖԱԳԱՄԱ» ՍՊԸ-ին
ՀՎՀՀ 04724855
ՀՀ ք.Բաղրամյան/Վաղարշապատ/,
Աբովյան փ.10/1
հեռ. +37495040881
էլ. հասցեն՝ kafagamallc@gmail.com

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԿԱՖԱԳԱՄԱ» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 06.05.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-10/5-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) և 13.06.2025թ. կնքված N 1 Համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) շրջանակներում Ընկերությունը ապրանքների մի մասով՝ մինչև 20.08.2025թ., իսկ մյուս մասով՝ համաձայնագրի կնքումից հետո մինչև 150 օրացուցային օրվա ընթացքում պետք է մատակարարեր ապրանքներ՝ 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 16-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 35-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, 54-րդ, 56-րդ, 59-րդ, 60-րդ, 61-րդ, 62-րդ, 63-րդ, 64-րդ, 65-րդ, 66-րդ, 67-րդ, 68-րդ, 69-րդ և 70-րդ չափաբաժինների մասով, սակայն Ընկերությունը հրաժարվել է վերոնշյալ բոլոր չափաբաժինների մասով ապրանքների մատակարարումից:

Հիմք ընդունելով Պայմանագրի 6.3 կետը (Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու կամ չմատակարարելու դեպքում) ՀՀ պաշտպանության նախարարությունը 2025թ. օգոստոսի 13-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը և N 1 Համաձայնագիրը:

Տեղեկացնում եմ, որ Ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 769,474 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում ենթակա է գանձման նաև պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 17,422,315 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը՝ 26,133,472 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Ելնելով վերոգրյալից տեղեկացնում եմ, եթե մինչև 2025թ. օգոստոսի 22-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 17,422,315 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 26,133,472 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում. Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2025թ. օգոստոսի 22-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2073 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տուգանքի գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ԿԱՖԱԳԱՄԱ» ՍՊ ընկերության միջև 06.05.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-10/5-1 գնման պայմանագրի 8.3 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այլ ընկերություններից նշված պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերով և քանակներով վերոնշյալ բոլոր չափաբաժինների մասով ապրանքներ ձեռքբերելու դեպքում Ընկերությունը պարտավոր է փոխհատուցել գնային տարբերությունը՝ եթե նոր պայմանագրերը կնքվում են ավելի թանկ գնով, որի վերաբերյալ Ձեզ լրացուցիչ կծանուցվի:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ